

**«ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԲՈՒՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՈՒՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԵՎ ԴՐԱ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՍԻՆ» ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՆՎԵՆՏԻԱՅԻ (ԿՈՆՎԵՆՏԻԱ) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԻՄՆԱԿԱՆ ԹՅՈՒՐԸՆԿԱԼՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱԿԱՓԱՏԱՐԿՆԵՐ**

N	Թյուրընկալումներ/Փաստարկներ	Հակափաստարկներ
1	<p>Կոնվենցիայի վավերացումը պարտադրվում է Եվրոպայի կողմից:</p> <p>Դա արվում է ֆինանսական աջակցություն ստանալու ակնկալիքով</p>	<p>- Կոնվենցիայի վավերացումը պայմանավորված է ՀՀ կառավարության հանձնառությամբ, որը միտված է պաշտպանել կանանց բռնությունից և կանխարգելել, վերացնել կանանց նկատմամբ բռնությունն ու ընտանիքում բռնությունը, նպաստել կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացմանն ու խթանել կանանց և տղամարդկանց միջև հավասարությունը:</p> <p>ՀՀ կողմից այս հանձնառությունն իր արտահայտումն է ստացել կոնվենցիայի ստորագրմամբ, ինչը միջազգային իրավունքում հենց պետության կողմից հանձնառության ստանձնման արտահայտչաձևերից մեկն է՝ հատկապես, երբ հստակ է ստորագրման պահին, որ այդ կոնվենցիան ենթադրում է վավերացում: Հակառակ դեպքում ստացվում է, որ եթե հայտարարվում է, որ երկիրը ստորագրել է կոնվենցիան՝ չվավերացնելու նպատակով, առնվազն շիտակության և անկեղծության խնդիր կա թե միջազգային հանրության և թե հայ հասարակության նկատմամբ:</p> <p>Ավելին, կոնվենցիայի վավերացման նպատակահարմարությունը բխում է ՀՀ Սահմանադրությունից: Կանանց և տղամարդկանց միջև փաստացի հավասարության խթանումը հանդիսանում է պետության քաղաքականության հիմնական նպատակներից մեկը, ինչն ամրագրված է ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածով:</p> <p>-Կոնվենցիայի վավերացման հարցը բազմիցս բարձրացվել է մարդու իրավունքների միջազգային իրավական պաշտպանությամբ զբաղվող կոնվենցիոն մարմինների՝ Հայաստանի վերաբերյալ զեկույցներում: Մասնավորապես, կարելի է հղում անել ԵԽ մարդու իրավունքների հարցերով հանձնակատարի 2018թ.<sup>1</sup> և 2015թ.<sup>2</sup>, Համընդհանուր պարբերական դիտարկման 2015թ.<sup>3</sup>, Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեի 2017թ.<sup>4</sup>, Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոմիտեի 2016թ.<sup>5</sup>, ՄԱԿ-ի երեխաների վաճառքի, զրկման և օգտագործման կոնվենցիայի և երեխաների պրոտեկցիայի հարցերով հատուկ</p>

<sup>1</sup> <https://rm.coe.int/report-on-the-visit-to-armenia-from-16-to-20-september-2018-to-armenia-16090046>

<sup>2</sup> [https://search.coe.int/commissioner/Pages/result\\_details.aspx?Objectid=09000016806db6db](https://search.coe.int/commissioner/Pages/result_details.aspx?Objectid=09000016806db6db)

<sup>3</sup> <https://documents-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/G15/076/18/PDF/G1507618.pdf?OpenElement>

<sup>4</sup> <https://uhri.ohchr.org/Document/File/97d1e5aa-c492-4048-b00d-79b49e95b230/b5ad5afc-c7fd-4bfe-8476-90d7f64216fa>

<sup>5</sup> [https://www.refworld.org/pdfid/583863b34.pdf?fbclid=IwAR3BygqtoRwz7CWg0Wgy1moUIEA\\_1L1prxjO2QQgsuViWgw1f\\_LaW7YJ11k](https://www.refworld.org/pdfid/583863b34.pdf?fbclid=IwAR3BygqtoRwz7CWg0Wgy1moUIEA_1L1prxjO2QQgsuViWgw1f_LaW7YJ11k)

		<p>զեկուցողի 2016թ.<sup>6</sup>, ինչպես նաև Հայաստանի վերաբերյալ այլ զեկույցները:</p> <p>Բացի այդ, պետք է հստակ գիտակցել, որ Եվրոպայի Խորհուրդը ոչ թե մեր երկրից դուրս գտնվող ինչ-որ օտար միավոր է, այլ հենց մեր պետության անդամակցությամբ միջազգային կազմակերպություն: Այսինքն ՀՀ-ը դրա գործունեության, այդ թվում մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված կոնվենցիաների ստեղծման և կատարման վերահսկման մեջ ունի հավասար դերակատարություն այլ եվրոպական երկրների հետ միասին:</p>
2	<p>Կոնվենցիան ներմուծում է «Երրորդ սեռ» հասկացությունը</p> <p>Բուլղարիայի սահմանադրական դատարանը մերժել է Կոնվենցիայի վավերացումը, քանի որ Բուլղարիայի սահմանադրությունը չի ճանաչում <b>երրորդ սեռ</b>: Կոնվենցիան հակասում է նաև մեր Սահմանադրությանը:</p>	<p>2017թ-ից սկսած, երբ քննարկվում էր Ընտանիքում բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին օրենքի նախագիծը, հավասարաչափ քննարկվում էին Կոնվենցիայի դրույթները: Եվ այդ ժամանակ որևէ նման դիրքորոշում չի բարձրաձայնվել: Այս կարգի շահարկումներն ու մտքերը սկսեցին հանրային դիսկուրս բերվել բավականին վերջերս՝ հղում կատարելով Բուլղարիայի ՍԴ որոշմանը:</p> <p>Ի դեպ պետք է շեշտել, որ մասնագիտական շրջանակների և անգամ հատուկ կարծիք ներկայացրած դատավորների կողմից բազմիցս բարձրաձայնվել է, որ իրենց ՍԴ որոշումը պայմանավորել են առավելապես քաղաքական հանգամանքներ, դրա համար է բավական է սիրողական մակարդակի ուսումնասիրություն անել և ուղղակի համադրել հասարակ փաստեր տվյալ ժամանակահատվածում վերպետական և ներպետական մակարդակում տեղի ունեցող զարգացումների վերաբերյալ:</p> <p>Հարկավ չենք ձգտում նաև վերջնական իրավական գնահատական տալ Կոնվենցիայի՝ մեր Սահմանադրության համապատասխանության հարցին, նկատի ունենալով, որ դա Սահմանադրական դատարանի բացառիկ իրավասությունն է, սակայն անհնար է անտեսել այն փաստը, որ կոնվենցիայի վերջնականատակը համընկնում է մեր Սահմանադրությամբ ամրագրված պետական քաղաքականության նպատակի հետ: Ուստի արժե մեր հանրությանը հստակ բացահայտել թե ինչի մասին է և հատկապես ինչի մասին չէ այս Կոնվենցիան:</p> <p>Վերադառնալով Բուլղարիայի ՍԴ որոշմանը և դրանով ներմուծված «երրորդ սեռի» վերաբերյալ այսպես կոչված «մեղադրանքներին» - Նախ՝ Կոնվենցիան հստակ</p>

<sup>6</sup> <https://uhri.ohchr.org/document/index/F8C0213F-FE84-409E-9520-57B3238FA854>

		<p>տարբերակում է դնում «սեռ» և «գենդեր» հասկացությունների միջև, և սա պետք է լինի ուղենիշային միտք ընդհանրապես Կոնվենցիան կարդալիս:</p> <p>Բացի այդ, Բուլղարիայի սահմանադրական դատարանի կողմից քննված բուլղարերեն թարգմանությամբ տեքստում բուլղարերեն «սեռ» բառը [сoл] գործածվել է նաև «գենդեր» բառի փոխարեն և միայն մի տեղ՝ 4-րդ հոդվածի 3-րդ մասում է «գենդեր» բառը թարգմանվել որպես «սոցիալական սեռ» [социален пол] տարբերակելու համար նույն մասում թվարկվող խտրականության հիմքերի թվարկման մեջ նշվող «սեռ» [сoл] բառից:</p> <p>Այս տերմինաբանական շփոթն էլ դատարանի մոտ առաջացրել է այն հետևությունը, որ Կոնվենցիան ներմուծում է «երրորդ սեռի» [трети пол] հասկացությունը:</p> <p>Այսու, «Երրորդ սեռ» հասկացությունը, երևույթը, կոչքը ինչպես կուզեք, ներկայացված չէ կոնվենցիայում: Պետությունները միայն պարտավորվում են պաշտպանել տուժողների իրավունքներն առանց որևէ խտրականության, այդ թվում՝ առանց գենդերային խտրականության:</p>
3	<p>Կոնվենցիային վերագրվող «գենդերային ինքնություն» (gender identity) հասկացության մասով</p> <p>Ըստ ընդդիմախոսների <b>Կոնվենցիան կապված է ԵԽ մեկ այլ բանաձևի<sup>7</sup></b> հետ, որը միտված է պաշտպանելու LGBTI անձանց իրավունքները, ավելին՝ «համոզված» լինելով, որ դա բացատրվում է նաև Կոնվենցիայի Բացատրական գեկույցի 53-րդ կետում՝ նշված մեկնաբանության հետ, որտեղ ներկայացվում են Կոնվենցիայի 4-րդ</p>	<p>Կրկին, այս դիրքորոշումը հանրային քննարկման մեջ է դրվել Բուլղարիայի ՍԴ որոշումից հետո.</p> <p>Նախ պետք է նշել, որ ԵԽԽՎ վկայակոչվող բանաձևը անդամ պետությունների համար պարտադիր բնույթ չունեցող փաստաթուղթ է: Բացի այս, Բուլղարիայի ՍԴ կողմից չի ապացուցվել նշված փաստաթղթի հետ Կոնվենցիայի 4-րդ հոդվածի կապը, ավելին, ըստ էության, որևէ ձևով հստակ չի ներկայացվել, թե բռնությունից կանանց պաշտպանության և LGBTI անձանց իրավունքների պաշտպանության «մեղսագրվող» <b>կապը ինչպես է խճողում կնոջ և տղամարդու միջև առկա տարբերությունները կամ թե ինչպես է դա հանգեցնում այն բանին, որ հասարակությունը կորցնում է կնոջն ու տղամարդուն տարբերակելու կարողությունը</b>, ինչպես արձանագրվել է դատարանի որոշմամբ:</p>

<sup>7</sup> Recommendation 1915 (2010) of the Parliamentary Assembly on Discrimination on the basis of sexual orientation and gender identity

	<p>հողվածում հակախտրականության հիմքերի մեկնաբանությունը:</p> <p>ամրագրված մեծաթիվ</p>	<p>Հատկանշական է, որ հատուկ կարծիք ներկայացրած դատավորներից Դմիտրովը նման հիմնավորումը համարելով էնիգմա, նշել է, որ «ստացվում է, որ միայն այն փաստի ընդունումը, որ հասարակության մեջ կան լեսբիներ կամ տրանսգենդեր անձինք, տղամարդ ու կին հասկացությունները նույնանում են: Փառք Աստծո, որ սահմանադրության տեքստից ակնհայտ է, որ սահմանադիրը նման մտահոգություն չի ունեցել»:</p> <p>Բացի այդ, «գենդեր» կամ «գենդերային» բառի հանդեպ անհասկանալի աղմուկ բարձրացնելով հանրության մոտ վախեր առաջացնելը պարզապես ընդդիմախոսների կողմից մեր հայրենակիցներին մոլորեցնելու նպատակ է հետապնդում: ՀՀ օրենսդրությամբ դեռևս 2013 թվականից այս տերմինը բացատրված է և լայնորեն կիրառվում: Այսպես «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» օրենքը մանրամասն և հստակ սահմանում է, թե ինչ է գենդերը և գենդերային հավասարությունը:</p> <p>Փաստ է, որ նշված կոնվենցիան որևէ նոր տերմին չի մտցնում մեր պետության իրավական համակարգ: Հակառակը պնդելը կամ անտեղյակության կամ մանիպուլյացիայի արդյունք է:</p>
4	<p>Կոնվենցիայի ընդունման դեպքում ԼԳԲՏ անձանց կողմից երեխա որդեգրելը դառնալու է տեխնիկական հարց:</p> <p>&lt;Զուգընկերների&gt; շահարկման թեմայով</p> <p>«Ընտանեկան միավոր» հասկացության միջոցով փորձ է արվում լեզալացնել միասեռականների միությունը և դա ճանապարհ է բացում միասեռականների</p>	<p>Կոնվենցիան չի կարգավորում ընտանեկան կյանքը կամ ընտանիքի կառուցվածքը, և պետությունները ստիպված չեն փոխել ընտանիքի մասին ավանդական պատկերացումները: Այն չի պարունակում «ընտանիքի» սահմանումը և ոչ էլ խրախուսում է ընտանիքի որևէ կառուցվածք:</p> <p>Ավելին, Կոնվենցիայի բացատրական զեկույցում (3, 41, 219, 220, 236 և այլ բազմաթիվ կետերում), երբ խոսվում է անձանց շրջանակի մասին, ում վրա պետք է տարածվի կոնվենցիան, հատուկ բացահայտվում է, որ դա չպետք է սահմանափակվի միայն ամուսիններով կամ նախկին ամուսիններով, այն պետք է տարածվի նաև «ներպետական օրենսդրությամբ ճանաչված գուգընկերների» ("<b>partners as recognised by internal law</b>"), նախկին գուգընկերների և անգամ համակեցությամբ ապրողների վրա, որոնց հետ չկա</p>

<p>ամուսնության օրինականացման համար</p> <p>Կոնվենցիան իրավական անկյուն է տալիս ԼԳԲՏ անձանց, որը կարող է հիմք հանդիսանալ հետագա օրենսդրական կարգավորումների համար</p> <p>Կոնվենցիայի վավերացումը հիմք կստեղծի ԼԳԲՏ անձանց ներգրավմամբ մարմնավաճառության խթանման համար</p> <p>Կոնվենցիայի վավերացմամբ կստեղծվի մի միջավայր, որի արդյունքում կգրանցվի ԼԳԲՏ անձանց թվի կտրուկ աճ և ներհուսք</p>	<p>արյունակցական կամ ինտիմ կապ (domestic unit): Եվ այս ձևակերպման ներքո են ընկնում այնպիսի համակեցության տեսակներ, ինչպիսիք են՝ տատ ու թոռ, հորաքույր-մորաքույր կամ մայր և երեխա և այլն, որոնք մեր Սահմանադրությամբ չեն համարվում «ընտանիք», նկատի ունենալով, որ ընտանիքը տղամարդու և կնոջ միությունն է: Ավելին, բացատրական զեկույցում<sup>8</sup> ևս այս հոդվածի մեկնաբանությամբ նշվում է, որ ընտանեկան բռնությունն ընդգրկում է հիմնականում երկու տեսակ բռնություն՝ ինտիմ-զուգընկերների բռնություն ներկա կամ նախկին ամուսինների կամ զուգընկերների (իսկ վերևում դրա մասին նշվեց արդեն) և միջ-սերնդային բռնություն, որը որպես կանոն տեղի է ունենում ծնողների և երեխաների միջև:</p> <p>Բացի այդ, պետք է նկատի ունենալ, որ եթե մեր երկրում շատ տարածված չէ ամուսնությունից դուրս ապրող սակայն փաստացի ամուսնական հարաբերությունների մեջ գտնվելու երևույթը, ապա նման զուգընկերների, զույգերի կարգավիճակը ԵԽ անդամ պետություններում լայնորեն ճանաչվում և հավասարեցվում է ամուսնության հարաբերություններին. Եվ Կոնվենցիան նկատի ունենալով հենց այս լայն տարածումը, սուբյեկտային շրջանակում ներառել է նաև զուգընկերներին, որը բնավ չի նշանակում «նույն սեռի ընկերներ» կամ «նույն սեռի զուգընկերներ», ինչպես դա շահարկվում է, և ամենակարևորը՝ որ հստակ նշվում է, "<b>partners as recognised by internal law</b>" ինչը թարգմանաբար նշանակում է «ներպետական օրենսդրությամբ ճանաչված զուգընկերների» վրա է տարածվում Կոնվենցիան. Իսկ եթե ազգային օրենսդրությունը չի ճանաչում միասեռ անձանց ամուսնությունը կամ փաստացի ամուսնական հարաբերությունները, ապա այն պնդումները, թե Կոնվենցիան ներմուծում է ընտանիքի նոր մոդել կամ միասեռականների ամուսնության ճանապարհ է բացում կամ ավելին՝ վերջիններիս կողմից երեխա որդեգրելու համար հիմքեր է ստեղծում, առնվազն անտեղյակության հետևանք են, եթե ոչ մանիպուլյատիվ հետապնդած նպատակով և իմաստազուրկ՝ բովանդակությամբ:</p> <p><b>Ընդհանրապես, առաջարկում ենք յուրաքայուր մեկին, իր կարծիքը ձևավորելու համար քննադատական աչքով կարդալ կոնվենցիան և ազնվորեն պատասխանել այն հարցին, թե այդ որ նորմերն են, որ նման հարց են կարգավորում կամ նման</b></p>
---	--

Domestic violence includes mainly two types of violence: **intimate-partner violence between current or former spouses or partners** and **inter-generational violence which typically occurs between parents and children**. It is a gender neutral definition that encompasses victims and perpetrators of both sexes.

		<p><b>գաղափար խրախուսում:</b>  <b>Եվ եթե որևէ մեկը որևէ նման նորմ կգտնի Կոնվենցիայում, նախարարությունը պատրաստ է շահագրգիռ մասնագիտական քննարկում ծավալել պարզաբանելու համար հարցը: Ի դեպ, հասանելի է նաև Կոնվենցիայի հայերեն պաշտոնական թարգմանությունը:</b></p>
5	<p>Կոնվենցիան անսահմանափակ լիազորություններ է տալիս ԼԳԲՏ համայնքին:</p>	<p>Կոնվենցիան որևէ կերպ չի անդրադառնում ԼԳԲՏ անձանց համար իրավունքներ սահմանելու հարցին: Այն ընդամենը բացատրական զեկույցում ներկայացնում է, որ այդ խումբ անձինք կարող են ենթարկվել խտրականության Կոնվենցիայով նախատեսված աջակցության ծառայությունները ստանալու և պաշտպանական մեխանիզմներից օգտվելու հարցում:</p> <p>Պետք է նաև նկատել, որ նույն Բացատրական զեկույցի նույն կետում այս խոցելի շարքին են դասվում նաև միգրանտ և փախստական, ինչպես նաև ՄԻԱՎ վարակով տառապող կանայք և այլն:</p> <p>Այլ կերպ ասած՝ ԼԳԲՏ անձինք հիշատակվում են որպես Կոնվենցիայով նախատեսված պաշտպանական մեխանիզմներից օգտվող զոհերի շարքում առավել խոցելի խումբ՝ տարբերակված մոտեցում ցուցաբերելով հենց այդպիսին լինելու հիմքով:</p>
6	<p>Կոնվենցիան ավանդույթներ, սովորույթներ վերացնելու նպատակ է հետապնդում:</p> <p>Հոդված 14-ի հղում</p> <p>Կոնվենցիան պետությունների համար պարտավորություն է սահմանում դպրոցներում քարոզել երրորդ սեռ կոչվածը:</p>	<p>Կոնվենցիան միմիայն նշում է, որ ավանդույթները, մշակույթը և կրոնը չեն կարող կանանց նկատմամբ բռնությունն արդարացնելու հիմք հանդիսանալ:</p> <p>Պետք է նկատի ունենալ, որ Կոնվենցիան նախատեսված է տարբեր երկրների միանալու համար, և յուրաքանչյուր երկիր ունի իր յուրահատուկ և ուրույն պատմականորեն ձևակերպված ավանդույթներն ու իրավական շրջանակը և տրամաբանորեն՝ հասարակության զարգացման տարբեր մակարդակը:</p> <p>Ընդհանրապես միջազգային այս կարգի փաստաթղթերում, ինչպիսին նաև ԵԽ այս Կոնվենցիան է, երկրների ազգային ավանդույթների, ազգային օրենսդրությունների և իրավական շրջանակի վերաբերյալ ամրագրվում է հարգանքի և չմիջամտելու սկզբունքը:</p> <p>Ուրեմն ինչ է ասում այդ հոդվածը? Կոնվենցիայի 14-րդ հոդվածը նշում է՝ Մասնակից պետությունները, <b>հարկ եղած դեպքում (where appropriate)</b>, պետք է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկեն՝ միջանձնային հարաբերություններում կանանց եւ տղամարդկանց միջեւ հավասարության, կարծրատիպերից զերծ գենդերային դերերի, փոխադարձ հարգանքի եւ <b>վեճերը առանց բռնության լուծելու</b>, կանանց նկատմամբ գենդերային</p>

		<p>հիմքով բռնության եւ անձնական անձեռնմխելիության իրավունքի հարցերով ուսումնական նյութերն ընդգրկվեն պաշտոնական ուսումնական ծրագրերում՝ կրթական բոլոր մակարդակներում եւ հարմարեցված լինելով ուսումնառողների զարգացող ընդունակություններին:</p> <p>Բացատրական զեկույցի այս հոդվածը մեկնաբանող կետում<sup>9</sup> նշվում է, որ Պետություններն իրենք են որոշում, թե ինչ ուսումնական նյութեր պետք է դասավանդվեն և թե կրթության որ մակարդակներում: Այլ կերպ ասած՝ չկա պարտադրվող որևէ նյութի տեսակ և կարևոր է հասարակությունը կրթության մակարդակից սկսած ստանա պատշաճ տեղեկություն և կրթություն, որ ընտանիքում, հասարակության, քաղաքականության մեջ կնոջ ու տղամարդու դերերը միմյանց ստորադասված չեն, այլ դրանք հավասար են (միջանձնային հարաբերություններում կանանց եւ տղամարդկանց միջեւ հավասարության), <i>կամ</i> եթե դասագրքերում կինը մշտապես պատկերված է շերեփը ձեռքին, իսկ տղամարդը՝ գիրք կամ թերթ կարդալիս, սա չի նշանակում, որ կնոջ սոցիալական դերը հանգում է ուտելիք պատրաստելուն, իսկ տղամարդունը՝ քաղաքականությամբ զբաղվելուն կամ կառավարելուն (կարծրատիպերից զերծ գենդերային դերեր), որ եթե ընտանիքում, հասարակության մեջ, բողոքի ակցիաներում, հավաքների ընթացքում կամ քննարկումներ անելիս սեփական կարծիքը չպետք է պարտադրել վիրավորանքի, ուժի և վերջապես բռնության դրսևորմամբ (փոխադարձ հարգանքի և <b>վեճերը առանց բռնության լուծելու</b>) և այլն:</p> <p>Այսինքն՝ Կոնվենցիան ուսումնական նյութերի բովանդակությունը չի կանխորոշում և ոչ էլ թե որ մակարդակում ինչ պետք է ուսուցանվի, այլ պարզապես պահանջում է, որ վերը թվարկված հարցերը հաշվի առնվեն և ըստ նպատակահարմարության կրթական նյութերում ներառվեն: Ավելին, նույն կետում նաև նշվում է, որ որոշ երկրներ ներառում են նման նյութերը ուսումնական ծրագրերում, իսկ որոշներն էլ՝ այդ հարցը թողնում են</p>
--	--	---

<sup>9</sup> In paragraph 1, this article addresses the need to design, where Parties deem appropriate, teaching material for all levels of education (primary, secondary and tertiary education) that promotes such values and enlightens learners with respect to the various forms of violence covered by the scope of this Convention. **Where Parties deem teaching material appropriate**, it needs to be adapted to the capacity of learners, which would, for example, require primary school teaching material to meet the intellectual capacity of primary school students. Teaching material means any type of formally developed and approved material that forms part of the curriculum and that, where appropriate, all teachers at a particular school have access to and are required or requested to use in class. **As the words “where appropriate” indicate, the drafters did not want to impose a specific model on the Parties.** Rather, this provision leaves it to the Parties to decide which type of schooling and which age group of learners they consider such teaching material to be appropriate for. **The drafters decided on this wording to allow for a maximum of flexibility in the implementation of this provision also taking into account different possibilities between Parties in determining teaching materials. Some states for instance determine the teaching aims in their formal curriculum while leaving it to the schools to decide on the proper working methods and teaching materials to be used to reach these aims.** The term “formal curriculum” refers to the planned programme of objectives, content, learning experiences, resources and assessment offered by a school where appropriate. It does not refer to incidental lessons which can be learnt at school because of particular school policies.

		<p>դպրոցի հայեցողությանը:</p> <p><b>Ուստի, այստեղ նույնպես որևէ վախենալու նորույթ չկա և չի կարող լինել: Նույն «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» օրենքը գենդերային խտրականություն է համարում կարծրատիպերի վերարտադրությունը զանգվածային լրատվությամբ, կրթության և մշակույթի միջոցով: Այսինք մեր գործող օրենսդրությունն այդ ամենը տարիներ առաջ սահմանել է և որևէ սեռական կողմնորոշման քարոզի մասին խոսք լինել չի կարող:</b></p>
7	<p>Հնարավորություն է ստեղծվելու ապաստան և փախստականի կարգավիճակ տրամադրել այլ երկրների ԼԳԲՏ անձանց՝ դա անելով գենդերային հիմքով</p>	<p>Ընդդիմախոսները փորձում են շահարկել &lt;Փախստականների և ապաստանի&gt; մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի սահմանումը, որով որպես փախստական է ճանաչվում այն օտարերկրյա քաղաքացին, որը ռասայական, կրոնական, ազգային, սոցիալական որոշակի խմբի պատկանելության կամ քաղաքական հայացքների համար հետապնդման ենթարկվելու հիմնավոր երկյուղի հետևանքով գտնվում է իր քաղաքացիության երկրից դուրս և չի կարող կամ նույն երկյուղի պատճառով չի ցանկանում օգտվել իր քաղաքացիության երկրի պաշտպանությունից, կամ նա, ով, չունենալով քաղաքացիություն և գտնվելով իր նախկին մշտական բնակության երկրից դուրս, չի կարող կամ այդ նույն երկյուղի պատճառով չի ցանկանում վերադառնալ այնտեղ:</p> <p>Հարկ է նշել, որ մեջբերված հոդվածում թվարկվող հատկանիշներն ամբողջությամբ համապատասխանում են Սահմանադրությամբ խտրականության արգելքը սահմանող 29-րդ հոդվածով ամրագրված պաշտպանված հատկանիշներին:</p> <p>Այժ տեսնենք թե ինչ է սահմանում Կոնվենցիան:</p> <p>Հոդված 60 – Գենդերային հիմքով ապաստան ստանալու խնդրանքներ</p> <p>1. Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական եւ այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ապահովելու համար, <b>որպեսզի գենդերային հիմքով կանանց նկատմամբ բռնությունը հնարավոր լինի ճանաչել որպես հետապնդում՝</b> Փախստականների կարգավիճակի վերաբերյալ 1951թ Կոնվենցիայի 1-ին հոդվածի Ա մասի 2-րդ կետի իմաստով, եւ որպես ծանր հետեւանքի դրսեւորում, որը հիմք է տալիս լրացնող/սուբսիդիար պաշտպանություն իրականացնելու համար:</p> <p>2. Մասնակից պետությունները պետք է ապահովեն, որպեսզի գենդերային բաղադրիչը հաշվի առնող մեկնաբանություն տրվի Կոնվենցիայի հիմքերից յուրաքանչյուրին, եւ եթե հաստատվի, որ հետապնդման վախը առկա է այդ մեկ կամ մեկից ավելի հիմքերի</p>




		<p>նկատմամբ, ապա փախստականի կարգավիճակը դիմումատուներին պետք է տրվի կիրառելի համապատասխան իրավական գործիքներին համապատասխան:</p> <p>3. Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական եւ այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ապաստան հայցողների համար գենդերային բաղադրիչը հաշվի առնող ընդունման ընթացակարգեր եւ աջակցության ծառայություններ, ինչպես նաեւ գենդերային ուղեցույցներ եւ գենդերային բաղադրիչ ունեցող ապաստան տրամադրելու ընթացակարգեր ստեղծելու համար, ներառյալ՝ փախստականի կարգավիճակ տալու հարցի լուծումը եւ միջազգային պաշտպանության մասին դիմումները:</p> <p>Բացատրական զեկույցի 311 կետով<sup>10</sup> սահմանվում է որ ճիշտ է Կոնվենցիայի 60-րդ հոդվածում նշվում է, որ Կողմերը պետք է անհրաժեշտ օրենսդրական և այլ միջոցները ձեռք առնեն, որպեսզի կանանց դեմ գենդերային հիմքով բռնությունը դիտարկվի որպես լուրջ վնաս և այդ համատեքստում նման զոհերին ապաստան տալու համար միջոցներ ձեռնարկեն, միևնույն ժամանակ, այս պարագրաֆի նպատակը չէ չեղյալ հայտարարել կամ այլ մի նոր բան սահմանել (overrule), քան սահմանված է 1951թ Փախստականների կարգավիճակի մասին ՄԱԿ Կոնվենցիայում, որն ի դեպ ՀՀ-ն վավերացրել է 1993 թվականից:</p> <p>Այլ կերպ ասած, այս հոդվածի իմաստը, որ գենդերային հիմքով կանանց բռնության դեպքերում պետությունները դիտարկեն նման անձանց ապաստան տալու հարցը:</p>
8	<p>Իրենց կին համարող տղամարդիկ կարող են խուսափել զինվորական ծառայությունից</p>	<p>Զինապարտության մասին օրենքի 11-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտադիր զինվորական ծառայության են զորակոչվում 18-ից մինչև 27 տարեկան (բացառությամբ սույն օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքի) <b>արական սեռի զորակոչիկները</b> և մինչև 35 տարեկան առաջին խմբի պահեստազորի սպաները, ովքեր առողջական վիճակի պատճառով ճանաչվել են զինծառայության համար պիտանի՝ խաղաղ պայմաններում:&gt;:</p> <p>Քաղաքացիական կացության ակտերի մասին օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասի &lt;գ&gt; կետի համաձայն՝ քաղաքացիական կացության ակտի գրառման մեջ ուղղում, լրացում կամ փոփոխություն կատարելու մասին ՔԿԱԳ մարմնի եզրակացությունը</p>

<sup>10</sup> 311. Although paragraph 1 consecrates what is already being undertaken in practice, the drafters considered it important to include the obligation of Parties to take the necessary legislative or other measures to ensure that gender-based violence against women may be recognised as a form of persecution within the meaning of Article 1 A(2) and as a form of serious harm. In other words, Parties to the Convention are required to recognise the gender-specific violence may amount to persecution, and lead to the granting of refugee status. ....At the same time, it is not the intention of this paragraph to overrule the provisions of the 1951 Convention, in particular with regard to the conditions of granting refugee status imposed by Article 1 of this Convention.

		<p>կազմվում է նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով բժշկական կազմակերպության կողմից տրված սեռի փոփոխության մասին սահմանված ձևի փաստաթուղթի հիմքով:</p> <p>Ի դեպ, ՔԿԱԳ օրենքն ուժի մեջ է 2005 թվականից նույն տեսքով:</p> <p>Այլ կերպ ասած, առանց որևէ Կոնվենցիա վավերացնելու էլ, այժմ որևէ մեկ արական սեռի անձ, ով զինապարտությունից խուսափելու նպատակով անգամ, կփոխի սեռը և այդ հիմքով վերջինիս քաղ. կացության ակտում կկատարվի փոփոխություն՝ սեռը դարձնելով արականից՝ իգական՝ հիմք ընդունելով բժշկական կազմակերպության կողմից տրված սեռի փոփոխության մասին սահմանված ձևի փաստաթուղթը, նշված անձը խնդրո առարկա <b>Կոնվենցիայի չվավերացված</b> լինելու պայմաններում հիմա էլ ենթակա չի լինի պարտադիր զինվորական ծառայության, նկատի ունենալով, որ Զինապարտության մասին օրենքի իմաստով պարտադիր զինվորական ծառայության զորակոչվում են <b>միայն արական սեռի զորակոչիկները</b>:</p>
9	<p>Կոնվենցիան վտանգում է հայկական ընտանիքի կոնցեպտը:</p> <p>Կոնվենցիան անդրադառնում է նույնասեռ ամուսնությունների ընդունմանը:</p>	<p>Կոնվենցիան չի կարգավորում ընտանեկան կյանքը կամ ընտանիքի կառուցվածքը, և պետությունները ստիպված չեն փոխել ընտանիքի մասին ավանդական պատկերացումները կամ առավել ևս սահմանադրական նորմերը:</p> <p>Այն չի պարունակում «ընտանիքի» սահմանումը և ոչ էլ սահմանում ընտանիքի մեր պատկերացրած ձևին հակասող որևէ կառուցվածք:</p> <p>Կոնվենցիան չի անդրադառնում նույնասեռ ամուսնությունների ընդունմանը: Կոնվենցիան որևէ կերպ չի ազդում ամուսնության մասին ազգային օրենսդրության վրա:</p> <p>Կոնվենցիան գենդերային ինքնության և սեռական կողմնորոշման, այդ թվում՝ միասեռ զույգերի օրինական ճանաչման վերաբերյալ մեր օրենսդրությանը հակասող չափորոշիչներ չի սահմանում:</p> <p>Կոնվենցիայով արգելվում է խտրականությունը մի շարք հիմքերով, ներառյալ՝ գենդերային ինքնության և սեռական կողմնորոշման հիմքով (4-րդ հոդվածի 3-րդ կետ): Այն երաշխավորում է պաշտպանություն և աջակցություն բռնության բոլոր զրհերի համար՝ անկախ նրանց առանձնահատկություններից:</p>
10	<p>«Գենդեր» բառը փոխարինում է «կանայք» և «տղամարդիկ» եզրերին:</p>	<p>Կոնվենցիան հստակ տարբերակում է դնում «սեռ» և «գենդեր» հասկացությունների միջև: Կոնվենցիայում «գենդեր» բառն օտագործվում է՝ մատնանշելու համար, որ կանանց ավելի հաճախ են ենթարկում բռնության, քանի որ նրանք կին են:</p>


		<p>Կարևոր է նաև անդրադառնալ այն սահմանափակ պնդմանը, որն անում են մեր իրավաբանական համայնքի ներկայացուցիչները, երբ խոսում են կնոջ գենդերային դերակատարությանը, որն ինչ որ կերպ արձանագրված է Սահմանադրությամբ և որն ըստ իրենց՝ հանգում է մայր, մայրություն, ծննդաբերել դերերին :</p> <p>Կարծում ենք՝ սա առնվազն շատ խոցելի պնդում է այն պայմաններում և հասարակական հարաբերություններում, երբ կինը կամավոր կերպով իր որոշմամբ ընտրում է չունենալ երեխաներ կամ որոշակի առողջական և այլ պատճառներով չի կարող ունենալ երեխաներ, կամ մայրության է հասնում ոչ ծննդաբերության ճանապարհով (որդեգրում, փոխնակ մայրություն):</p> <p>Այլապես ընդդիմախոսների տրամաբանությամբ ստացվում է, որ կինը, որը չի կարող մայրանալ, այլևս կին չէ: Զավեշտալի է, որ «երրորդ սեռի» մասին այդքան մտահոգ խոսողները հենց իրենք են, ըստ էության, առաջարկում կանանց տարանջատել երկու ենթասեռի:</p> <p>Հարկ է նորից նշել, որ «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» օրենքը գենդեր բառի հստակ սահմանումը տվել է 6 տարի առաջ և որևէ կերպ տարիների ընթացքում չի փոխարինել «կին-տղամարդ» հասկացություններին մեր օրենսդրության մեջ:</p>
11	<p>«Որևէ կոնվենցիա ստորագրելն ինքնին չի նշանակում, որ այն պատրադիր պետք է վավերացվի՝ թե՛ իրավական, թե՛ քաղաքական տեսանկյունից: Իրավական տեսանկյունից՝ միջազգային ցանկացած պայմանագիր կարող է ստորագրվել, անգամ երբեք չվավերացվել, քանի որ կարող է հակասել տվյալ երկրի սահմանադրությանը: Վավերացումն, ինքնին ենթադրում է այդ կոնվենցիայի պարտադիր նշանակություն և հետևանք՝ տվյալ երկրի ժողովրդի համար, իսկ երբ հասարակությունները ու ժողովուրդը պատրաստ չեն դրան,</p>	<p>Ստորագրման-վավերացման մասով տող՝ 1;</p> <p><u>ՄԹ վավերացման մասով</u> Հիմնական պատճառը, որը դանդաղեցնում է ՄԹ կողմից Ստամբուլի կոնվենցիայի վավերացումը, համապատասխանությունն է կոնվենցիայի 44-րդ հոդվածին (<b>Արտատարածքային իրավագործությունը-Extraterritory Jurisdiction</b>), ինչը նշանակում է, որ <b>ամբողջ Թագավորության տարածքներում օրինազանցների պատասխանատվության ենթարկելու համար անհրաժեշտ է ունենալ մեկ միասնական օրենսդրական դաշտ:</b></p> <p>ՄԹ մի շարք ոլորտներում արդեն իսկ ունի համապատասխան միասնական իրավական կարգավորումներ, նաև այնպիսի հանցագործությունների տեսակների համար, որոնք նախատեսված են Կոնվենցիայով (հարկադիր ամուսնություն, ամլացում, ստերջացում և այլն), սակայն որոշ ոլորտներում, ինչպիսիք են ընտանեկան բռնության որոշ տեսակները, բռնաբարությունը, սեռական ոտնձգությունները, դեռ մեծածավալ աշխատանք կա իրականացնելու:</p>


	<p>չեն վավերացվում»:</p> <p>Որպես օրինակ՝ նշվում է Մեծ Բրիտանիան, որտեղ կոնվենցիան ստորագրվել է, սակայն արդեն 7 տարի է՝ չի վավերացվում»</p>	<p>Միաժամանակ իրավասությունների վերաբերյալ Կառավարության քաղաքականության համաձայն՝ քրեական պատասխանատվության ենթարկումն ու դատավճռի կայացումն իրականացնում է ՄԹ այն առանձին պետության քրեական դատարանը, որի տարածքում իրականացվել է հանցանքը: Ոոստի այս առումով ևս հսկայական աշխատանք պետք է իրականացվի՝ 44-րդ հոդվածը լիարժեք կիրարկելու համար<sup>11</sup>:</p> <p>Այլ կերպ ասած՝ ՄԹ օրինակում չվավերացման պատճառը Թագավորության և դրա բոլոր տարածքներում ազգային օրենսդրության համապատասխանեցման բարդ խնդիրն է, որի բարդությունը պայմանավորված է նաև այն բազմաթիվ փոքր կղզիների և Բրիտանական 14 անդրծովյան տարածքների առկայության փաստից, որոնք չունեն ինքնավարություն և գտնվում են ՄԹ իրավագործության տակ, այսինքն՝ Կոնվենցիայի իմաստով համարվում են ՄԹ: Բացի այս, ավանդական հասարակության և պահպանողականության հանգամանքներին հղում կատարողներն առնվազն պետք է նաև հրապարակեն փաստերը, որ ՄԹ-ում օրենքով արտանված են միասեռ ամուսնությունները դեռևս 2014 թ-ից, իսկ Որդեգրման և երեխաների մասին ակտի համաձայն միասեռ ամուսինները կարող են երեխա որդեգրել դեռևս 2002թ-ից:</p>
12	<p>Բուլղարիայի սահմանադրական դատարանի որոշման մասին</p>	<p><b><u>Նախ, Բուլղարիայի մասին մի քանի հարցին վերաբերելի տվյալներ՝</u></b></p> <p> Գենդերային հավասարության Եվրոպական ինստիտուտի 2017թ. ուսումնասիրության համաձայն<sup>12</sup> ԵՄ 28 անդամ պետություններից Բուլղարիան ամենաբարձր ցուցանիշն ունի անդամ պետությունների շարքում ընտանեկան բռնության տարածվածության, ծանրության և լատենտության աստիճանի ցուցանիշով և եթե այս առումով &lt;ամենալավ&gt; իրավիճակում գտնվող Լեհաստանի ցուցիչը 22.1 է, ապա Բուլղարիայինը՝ 44.2 է: Ի դեպ, այս ցուցանիշներում Բուլղարիայից հետո ամենաբարձր ցուցիչը Լատվիան է (չի վավերացրել կոնվենցիան), իսկ հաճախ մեջբերվող Սլովակիան ԵՄ անդամ պետությունների ընտանեկան բռնության այս</p>


<sup>11</sup> ՄԹ Ստամբուլի կոնվենցիան ստորագրել է 2012թ.-ին, ու չնայած այն հանգամանքին, որ մինչ օրս ՄԹ օրենսդիր մարմինը չի վավերացրել կոնվենցիան, ՄԹ-ում 2018թ-ի **Կառավարության տարեկան զեկույցի համաձայն՝ կոնվենցիայի 95% հոդվածներն արդեն իսկ ազգայնացվել են, ու առկա է համապատասխան տեղական օրենսդրություն:** Չվավերացման փաստը պետությանը չի ազատում համապատասխան բարեփոխումներ կատարելուց: ՄԹ-ում իրականացվող փոփոխությունները ներառում են կոնվենցիայի բոլոր ուղղությունները՝ ներառական քաղաքականություն, կանխարգելում, պաշտպանություն և արդարադատություն: Այս համատեքստում իրականացվում են բամբակյա աշխատանքներ, ինչպես օրինակ՝ օրենսդրական փոփոխություններ, ինստիտուցիոնալ վերակառուցումներ ու հզորացման գործընթացներ, ֆիզիկական հիմնարկների կառուցում և այլն: Այս շրջանակներում կառավարությունն ավելացրել է նշյալ 4 ուղղություններին տրամադրվող ֆինանսական հատկացումները, համապատասխանաբար՝ 100 մլն. \$Մ, 32 մլն. \$Մ, 21 մլն. \$Մ և 68 մլն. \$Մ: Առանձին ֆինանսական հատկացում կա նաև վերականգնողական աշխատանքների ու ծառայությունների համար՝ մոտ 175 մլն \$Մ չափով:


<sup>12</sup> <file:///C:/Users/K-Grigoryan/Downloads/mh0217332enn.pdf>

անաբարձր ցուցիչներում 7-րդն է՝ 39, այն դեպքում երբ ԵՄ միջինացված ցուցիչը 27.5 է:


 Բուլղարիայի Հելսինկյան Կոմիտեի վերջին զեկույցի<sup>13</sup> համաձայն՝ յուրաքանչյուր երկու շաբաթը մեկ երկրում մի կին է սպանվում, ընդ որում, 93% դեպքերում հանցագործը կնոջ զուգընկերն է կամ ազգականը:

 Ըստ ԵՄ Հիմնարար իրավունքների գործակալության (FRA) ուսումնասիրության<sup>14</sup> Բուլղարիան երկրորդ ամենացածր տոկոսն ունի ԵՄ անդամ պետությունների շարքում իրենց շրջապատում և ընտանիքում ընտանեկան բռնության (այդ թվում՝ սեռական բռնության) ենթարկված անձանց մասին տեղեկություններ ունենալու ցուցանիշով, ինչը ըստ ուսումնասիրության, մասամբ բացատրվում է նաև այն ցուցանիշով, որ բուլղարական մամուլի կողմից նման կատեգորիայի միայն շատ ծանր դեպքերն են լուսաբանվում<sup>15</sup>: Ըստ ուսումնասիրության՝ Բուլղարիայում ընտանեկան բռնությունը մեծամասամբ դիտարկվում է խիստ մասնավոր հարց, որի մասին չի խոսվում անգամ ընտանիքի անդամների և ընկերների հետ:

 Բուլղարիայում բռնությունից տուժող անձանց համար ապահովված և հասանելի չեն բավարար ծառայություններ, միայն 2017 թվականին դատարանները մոտ 2500 սահմանափակման կարգադրություններ (անհետաձգելի միջամտության և պաշտպանական որոշումներ) են տվել, սակայն երկիրն ունի միայն 5 ճգնաժամային կենտրոն, որոնք կարող են ընդունել նշված թվով անձանց միայն 2%-ին:

 Հատուկ Եվրոբարոմետրի 2017 թվականին իրականացված հարցախույզը<sup>16</sup> ցույց է տալիս, որ Բուլղարիայում կանանց դերի վերաբերյալ ակնհայտորեն գերակշռում են «պատրիարխալ» մոտեցումները, ըստ այդմ, հարցվողների 81%-ը համաձայնել է պնդման հետ, որ կնոջ դերը ընտանիքի մասին հոգ տանելն ու տան գործերով զբաղվելն է:

**Սահմանադրական դատարանի որոշման փաստարկների վերլուծություն.**

 **Փաստարկ 1.** Նախ, ՍԴ հիմնավորումների առաջին մասը վերաբերում է հասկացություններին, մասնավորապես, դատարանը նշել է, որ Կոնվենցիան պարունակում է ներքին հակասություններ, քանի որ թեև կոնվենցիայի վերնագիրը վերաբերում է կանանց պաշտպանությանը, սակայն դրույթների մեծ մասում օգտագործվում է «գենդեր» բառը: Ըստ դատարանի՝ սա առիթ կարող է ստեղծել

<sup>13</sup> <http://www.bghelsinki.org/en/news/press/single/bulgarian-helsinki-committee-published-its-report-human-rights-bulgaria-2017/>

<sup>14</sup> [https://fra.europa.eu/sites/default/files/fra\\_uploads/fra-2014-vaw-survey-main-results-apr14\\_en.pdf](https://fra.europa.eu/sites/default/files/fra_uploads/fra-2014-vaw-survey-main-results-apr14_en.pdf)

<sup>15</sup> Ն ու յ ն ու ս ու մ ն ա ս ի թ ու թ յ ու ն ը , էջ՝ 126.

<sup>16</sup> [https://data.europa.eu/euodp/data/dataset/S2154\\_87\\_4\\_465\\_ENG](https://data.europa.eu/euodp/data/dataset/S2154_87_4_465_ENG)

որոշակի անհետևողական մեկնաբանությունների, ինչն իր հերթին կարող է հանգեցնել իրավունքի գերակայության հետ կապված խնդրի: Դատարանը մասնավորապես նշել է, որ «գործածվող հասկացություններում դրված իմաստը ոչ միայն չի խթանում սեռերի միջև իրավահավասարության ապահովման գաղափարը, այլև անորոշ է դարձնում դրանց տարբերությունները», և ընդհանուր առմամբ եզրակացրել է, որ **«եթե հասարակությունը կորցնում է իր կարողությունը տարբերակելու տղամարդուն և կնոջը, ապա կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարը կմնա ձևական հանձնառություն, որն հնարավոր չէ իրագործել»:**

**Հակափաստարկ.**

Նախ, այս թվացյալ բացարձակ հետևության առնչությամբ պետք է նշել, որ Կոնվենցիան հստակ տարբերակում է դնում «սեռ» և «գենդեր» հասկացությունների միջև, և սա պետք է լինի ուղենիշային միտք ընդհանրապես Կոնվենցիան կարգալիս:

Բացի այդ, հատկանշական է, որ Բուլղարիայի սահամանադրական դատարանի կողմից դիտարկված բուլղարերեն թարգմանությամբ տեքստում բուլղարերեն «սեռ» բառը [пол] գործածվել է նաև «գենդեր» բառի փոխարեն և միայն մի տեղ՝ 4-րդ հոդվածի 3-րդ մասում է «գենդեր» բառը թարգմանվել որպես «սոցիալական սեռ» [социален пол] տարբերակելու համար նույն մասում թվարկվող խտրականության հիմքերի թվարկման մեջ նշվող «սեռ» [пол] բառից: Այս տերմինաբանական շփոթն էլ դատարանի մոտ առաջացրել է այն թյուր հետևությունը, որ Կոնվենցիան ներմուծում է «երրորդ սեռի» [трети пол] հասկացությունը:

**Փաստարկ 2.** Դատավորների մեծամասնության համար նաև խնդրահարույց է եղել այն, որ Կոնվենցիան չի սահմանում «գենդերային ինքնություն» (gender identity) հասկացությունը: Եվ չգտնելով այն **Կոնվենցիայում**, փորձ է արվել կապել այս փաստաթղթուղը ԵԽ մեկ այլ **բանաձևի**<sup>17</sup> հետ, որը միտված է պաշտպանելու LGBTI անձանց իրավունքները, ավելին՝ «համոզված» լինելով, որ դա բացատրվում է նաև Կոնվենցիայի Բացատրական զեկույցի 53-րդ կետում<sup>18</sup> նշված մեկնաբանության հետ, որտեղ ներկայացվում են Կոնվենցիայի 4-րդ հոդվածում ամրագրված հակախտրականության մեծաթիվ հիմքերի մեկնաբանությունը:

**Հակափաստարկ.** Նախ պետք է նշել, որ ԵԽԽՎ բանաձևը անդամ պետությունների համար պարտադիր բնույթ չունեցող փաստաթուղթ է: Բացի այս, դատարանի կողմից չի ապացուցվել նշված փաստաթղթի հետ Կոնվենցիայի 4-րդ հոդվածի կապը, ավելին ըստ

<sup>17</sup> Recommendation 1915 (2010) of the Parliamentary Assembly on Discrimination on the basis of sexual orientation and gender identity

էության, որևէ ձևով հստակ չի ներկայացվել, թե բռնությունից կանանց պաշտպանության և LGBTI անձանց իրավունքների պաշտպանության «մեղսագրվող» կապը ինչպես է խճողում կնոջ և տղամարդու միջև առկա տարբերությունները կամ թե ինչպես է դա հանգեցնում այն բանին, որ հասարակությունը կորցնում է կնոջն ու տղամարդուն տարբերակելու կարողությունը:

Հատկանշական է, որ հատուկ կարծիք ներկայացրած դատավորներից Դմիտրովը նման հիմնավորումը համարելով էնիգմա, նշել է, որ «ստացվում է, որ միայն այն փաստի ընդունումը, որ հասարակության մեջ կան լեսբիներ կամ տրանսգենդեր անձինք, տղամարդ ու կին հասկացությունները նույնանում են: Փառք Աստծո, որ սահմանադրության տեքստից ակնհայտ է, որ սահմանադիրը նման մտահոգություն չի ունեցել»: Ավելին, Դմիտրովը նաև նշում է, որ տրանսգենդեր անձինք, ինչպես Բուլղարիայի բոլոր քաղաքացիները, խտրականությունից պաշտպանված են սահմանադրությամբ և օրենսդրական տարբեր ակտերով:

Դատարանի կողմից գենդերային ինքնության հետ կապված այս ծայրահեղ մեկնաբանությունը, մեղմ ասած, չի բխում ԵՄ անդամ Բուլղարիայի կողմից ընդունված և երկրի սահմանադրության նկատմամբ գերակայություն ունեցող «Հիմնարար իրավունքների մասին ԵՄ խարտիան», որի 21-րդ հոդվածը սահմանում է՝ «Խտրականության որևէ դրսևորում՝ հիմնված սեռի, ռասայի, գույնի, էթնիկական կամ սոցիալական ծագման, գենետիկ հատկանիշների, լեզվի, կրոնի կամ հավատամքի, քաղաքական կարծիքի կամ այլակարծության, ազգային փոքրամասնության պատկանելության փաստի, ունեցվածքի, ծննդի, հաշմանդամության, տարիքի կամ սեռական կողմնորոշման, արգելված է»:

Ավելին, այս դրույթը բառացիորեն կրկնված է Բուլղարիայի «Խտրականությունից պաշտպանության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասում: Ի հավելումն, Սահմանադրական դատարանի փաստարկը չի դիմանում Հիմնարար իրավունքների մասին ԵՄ խարտիայի 1-ին հոդվածով ամրագրված մարդկային արժանապատվության (human dignity) անխախտելիության սկզբունքին:

**Պ Փաստարկ 3.** Հաջորդ կենտրոնական փաստարկը վերաբերում է դատարանի կողմից կնոջ սոցիալական դերի խիստ նեղ մեկնաբանությանը: Ըստ դատարանի՝ Կոնվենցիայի 3-րդ հոդվածի <գ> կետը և 4-րդ հոդվածի 3-րդ մասը հակասում են սահմանադրությանը, քանի որ թե սահմանադրությունը և թե բուլղարական օրենսդրությունը հիմնվում են մարդկային տեսակի գոյության վերաբերյալ բինար (երկու իրար հակադիր/տարբերվող) պատկերցման վրա: Ըստ այդմ, համադրելով անվերաբերելի երկու դիտարկում, դատարանը հանգել է նրան, որ Կոնվենցիան հակասում է սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասին, որն արգելում է տարբեր

	<p>հանգամանքներով, այդ թվում՝ անձի սեռով պայմանավորված իրավունքների սահմանափակումը: Այնուհետ դատարանը հղում կատարելով սահմանադրության 47-րդ հոդվածի 2-րդ մասին<sup>18</sup>, հանգում է այն եզրակացության, որ կնոջ բիոլոգիական սեռին վերաբերելի են հետևյալ սոցիալական դերերը՝ «մայր», «ծննդաբերել» և «մանկաբարձական խնամք»:</p> <p><b>Հակափաստարկ.</b> Նախ բինարության սկզբունքը որևէ ձևով հակադրելի ավելի ճշգրիտ վերաբերելի չէ սահմանադրությամբ սահմանված խտրականության արգելման սկզբունքի հետ, ավելին հենց նման մեկնաբանության փորձն է խտրական և սահմանափակող:</p> <p>Հաջորդը, ըստ էության 47-րդ հոդվածն իրավունքներ է սահմանում մոր և երեխայի համար, իսկ կոնկրետ 2-րդ մասը սահմանում է՝ «Կինը, ով մայր է, օգտվում է պետության հատուկ պաշտպանությունից, և պետությունը երաշխավորում է նրա վճարովի ծննդյան և հետծննդյան արձակուրդը, անվճար մանկաբարձական խնամքը, աշխատանքի թեթևացված պայմաններն ու այլ սոցիալական աջակցությունը»:</p> <p>Ասվածի համատեքստում առնվազն պարզ չէ, թե մայրացած կնոջ սահմանադրական իրավունքներն ինչու են դառնում դատարանի կողմից կնոջ սոցիալական դերի համընդհանուր սահմանման միակ հիմքը: Տպավորություն է ստեղծվում, որ դատարանը կնոջ սոցիալական դերը սահմանափակում է միայն ծննդաբերության ֆունկցիայով այն դեպքում, երբ կանայք իրենց որոշմամբ կարող են և անգամ բուլղարական հասարակության մեջ հրաժարվում են երեխա ունենալուց կամ մայր են դառնում առանց ծննդաբերության, օրինակ՝ երեխա որդեգրելու միջոցով և այլն:</p> <p>Հատուկ կարծիք ներկայացրած դատավորներից Պենչևը նշել է, որ Բուլղարիայի «Կանանց և տղամարդկանց միջև հավասարության մասին» օրենքի 2-րդ հոդվածի 5-րդ մասով են անգամ ամրագրվել «գենդերային կարծատիպերը» որպես երկրի իրավահավասարության քաղաքականության կենտրոնական սկզբունք, մինչդեռ այդ քաղաքականության Լրացուցիչ Դրույթների 1-ին բաժնում նշվում է, որ կանայք և տղամարդիկ ազատ են զարգացնելու իրենց ունակությունները և կատարելու ընտրություններ՝ առանց իրենց սեռային և սոցիալական դերային սահմանափակումների: Այլ կերպ ասած՝ բուլղարական օրենսդրությամբ ամրագրված կանանց և տղամարդկանց սոցիալական դերի հայեցակարգն առավելի ճկուն է ընդգրկուն:</p>
--	---

<sup>18</sup> 47(2) Mothers shall be the object of special protection on the part of the State and shall be guaranteed prenatal and postnatal leave, free obstetric care, alleviated working conditions and other social assistance



		<p>Իհարկե, այս փաստարկին կարելի է հակադարձել, որ սահմանադրությունն առավել բարձր իրավաբանական ուժ ունի, քան օրենքներն ու քաղաքականության փաստաթղթերը, սակայն այստեղ պետք է արձանագրել, որ «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» ՄԱԿ կոնվենցիայի 5-րդ հոդվածով ամրագրված է, որ «Մասնակից պետությունները ձեռնարկում են բոլոր համապատասխան միջոցառումները. (ա) փոխելու տղամարդկանց ու կանանց վարքագծի սոցիալական և մշակութային մոդելները՝ նախապաշարմունքների ու սովորույթների և բոլոր այլ պրակտիկաների վերացմանը հասնելու նպատակով, որոնք հիմնված են այս կամ այն սեռի ստորադասության կամ առավելության, կամ տղամարդկանց ու կանանց ստերեոտիպային դերի գաղափարի վրա,»:</p> <p>Բուլղարիան վավերացրել է այս Կոնվենցիան և ըստ սահմանադրության այն ավելի բարձր իրավաբանական ուժ ունի, քանի երկրի հիմնական օրենքը:</p> <p><b>Պ Փաստարկ 4.</b> Դատարանը նաև ընդհանրացրել է, որ «ավանդաբար մարդկային հասարակությունը հիմնված է բինարիզմի կամ երկու հակադիր սեռերի գոյության սկզբունքի վրա, որոնցից յուրաքանչյուրն ունի յուրահատուկ բիոլոգիական և սոցիալական ֆունկցիաներ և պարտականություններ: Բիոլոգիական սեռը որոշվում է ծնունդով և դա է քաղաքացիական սեռի ձևավորման հիմքը»: Այնուհետ, հիմնվելով այս ձևակերպման վրա դատարանը եզրակացնում է, որ «ամուսնության այն ընկալումը, որ դա հարաբերություն է տղամարդու և կնոջ միջև, խորապես արմատավորված է Բուլղարիայի իրավագիտակցության մեջ»:</p> <p><b>Հակափաստարկ.</b> Նկատի ունենալով, որ Կոնվենցիան որևէ ձև չի անդրադառնում ամուսնության սահմանման հարցին՝ առնվազն տարօրինակ է, թե ինչու է դատարանը Կոնվենցիայի սահմանադրականության հարցը քննելիս անդրադառնում ամուսնության հասկացությանը, ավելին, ինչու է դատարանն «անհրաժեշտություն տեսնում պաշտպանելու» ամուսնության վերաբերյալ բուլղարական ավանդական ընկալումը՝ առավել տարօրինակ իրեն հակասող կերպով փաստարկելով, որ սեռերն ունեն ոչ միայն բիոլոգիական, բայց և յուրահատուկ սոցիալական ֆունկցիաներ և պարտականություններ:</p> <p>Ավելորդ չէ նաև հիշատակել, որ Բուլղարիայի Սահմանադրության 46-րդ հոդվածի 2-րդ մասն ամրագրում է, որ «Ամուսիններն ամուսնության մեջ և ընտանիքում ունեն հավասար իրավունքներ և պարտականություններ», այլ կերպ ասած՝ սահմանադրությամբ որևէ կերպ չեն տարանջատվում ամուսինների պարտականությունները՝ պայմանավորված վերջիններիս սոցիալական կամ բիոլոգիական դերերի տարբերությամբ:</p>
13	Շտապողականության կամ սեպտեմբերի երկրորդ տասնօրյակում	Նախ, Կառավարության 2019 թվականի մայիսի 16-ի 650-Լ որոշման 11-րդ կետում Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության դեպքում նշվում է՝ ԵԿ

<p>վավերացման գործընթացի կազմակերպման մասին պնդումներ</p>	<p>«Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» կոնվենցիայի <b>վավերացմանն ուղղված միջոցառումներին մասնակցություն</b>: Ընդ որում, որպես համակատարող գերատեսչություններ են նշված Արտաքին գործերի և Արդարադատության նախարարությունները: Մեջբերվող ժամկետը վերաբերում է աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և համակատարող նախարարությունների կողմից <b>վավերացմանն ուղղված միջոցառումներին մասնակցությանը</b>:</p> <p>Այժմ տեսնենք, թե ինչ է նշանակում վավերացում ներպետական օրենսդրության իմաստով:</p> <p>Այսպես «Միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի իմաստով՝ «<b>վավերացում</b>» Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից օրենք ընդունելու կամ հանրաքվեի միջոցով միջազգային պայմանագիրը Հայաստանի Հանրապետության համար պարտադիր ճանաչելուն ուղղված <b>ներպետական ընթացակարգ</b>»:</p> <p>Նույն օրենքի իմաստով ներպետական ընթացակարգը ենթադրում է ոչ միայն նշված նախարարությունների, այլև այլ իրավասու մարմինների (ֆինանսների նախարարություն՝ ֆինանսական պարտավորությունների մասով, Պետ գույքի ծառայություն՝ գույքային պարտավորությունների մասով), այդ թվում՝ Մարդու իրավունքների պաշտպանի կողմից կարծիքների ստացում և ամփոփում, ըստ անհրաժեշտության խորհրդատվական այլ կարծիքների ստացում, ներկայացում կառավարություն, ներկայացում Սահմանադրական դատարան, դրական եզրակացության դեպքում ներկայացում ԱԺ, որտեղ՝ քննարկում գլխադասային հանձնաժողովում, այնուհետ՝ լիազույստ նիստում, օրենքի քվեարկություն, նախագահի կողմից օրենքի ստորագրում և հրապարակում:</p> <p>Ուստի, Կոնվենցիայի վավերացման ներպետական ընթացակարգում մասնակցության համար նշված սեպտեմբերի 2-րդ տասնօրյակն ընդամենը աշխատանքի և սոցիալական հարցերի, արտաքին գործերի նախարարության և արդարադատության նախարարությունների կողմից վավերացմանն ուղղված գործընթացին «Միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքով սահմանված ընթացակարգերն ապահովելու մասին է և որևէ կերպ, չի կարող մեկնաբանվել որպես Կոնվենցիայի վավերացման հարցը Ազգային ժողով հասցնելու պարտավորություն:</p>
<p>ԵՄ Խորհրդարանը դիմել է Արդարադատության դատարանին կոնվենցիայի համապատասխանության</p>	<p>2017 թվականի հունիսի 13-ին ԵՄ Հանձնաժողովը ԵՄ անունից ստորագրել է կոնվենցիան՝ հիմք ընդունելով Խորհրդի 2017 թվականի մայիսին ընդունված երկու որոշումները, որոնցից մեկը վերաբերել է փախստականների ու նրանց</p>

	<p>հարցի ստուգման համար</p>	<p>չվերադարձելիության հարցերին, իսկ մյուսը՝ քրեական գործերով դատական համագործակցության հարցերին:</p> <p>2019 թվականի ապրիլին Եվրոպական պառլամենտում հարց է բարձրացվել<sup>19</sup>, թե արդյոք իրավական հիմքերի տեսանկյունից Խորհրդի <b>երկու</b> որոշումներ պետք է դրվեն կոնվենցիային միանալու հարցի հիմքում և ոչ թե՝ մեկը:</p> <p>Ուստի, ԵՄ պառլամենտը դիմել է Արդարադատության դատարան և խնդրել Դատարանին մեկնաբանել իրավական անորոշությունը, թե արդյոք Կոնվենցիային միանալը (accession) համապատասխանում է ԵՄ հիմնական համաձայնագրերին այն տեսակետից, որ արդյոք չի առաջացնում իրավական հիմքի ընտրության հարց՝ Խորհրդի երկու որոշմամբ Կոնվենցիայի ստորագրման (signing) և ամփոփման/վավերացման (conclusion) առումով:</p> <p>Ավելին, ԵՄ խորհրդարանի կողմից հաստատված նույն փաստաթղթում, տեքստի գործառնական մասում (ոչ նախաբանի) հղում է կատարվում ԵՄ խորհրդարանի 2017 թվականի սեպտեմբերի 12-ի ընդլայնված բանաձևին<sup>20</sup>, որում խորհրդարանը կոչ է անում ԵՄ անդամներին միանալ Կոնվենցիային՝ առանց սահմանափակումների և ձգձգումների:</p> <p>Այլ կերպ ասած՝ ԵՄ պառլամենտը դատարան է դիմել բացառապես իրավական ընթացակարգային հարցի վերաբերյալ մեկնաբանություն ստանալու համար:</p>
--	-----------------------------	---

<sup>i</sup> 53. In light of this case law, the drafters wished to add the following non-discrimination grounds which are of great relevance to the subject-matter of the Convention: gender, sexual orientation, **gender identity**, age, state of health, disability, marital status, and migrant or refugee status or other status, meaning that this is an open-ended list. Research into help-seeking behaviour of victims of violence against women and domestic violence, but also into the provision of services in Europe shows that discrimination against certain groups of victims is still wide-spread. **Women may still experience discrimination at the hands of law enforcement agencies or the judiciary when reporting an act of gender-based violence. Similarly, gay, lesbian and bisexual victims of domestic violence are often excluded from support services because of their sexual orientation. Certain groups of individuals may also experience discrimination on the basis of their gender identity, which in simple terms means that the gender they identify with is not in conformity with the sex assigned to them at birth. This includes categories of individuals such as transgender or transsexual persons, cross-dressers, transvestites and other groups of persons that do not correspond to what society has established as belonging to “male” or “female” categories. Furthermore, migrant and refugee women may also be excluded from support services because of their residence status.** It is important to point out that women tend to experience multiple forms of discrimination as may be the case of women with disabilities or/and women of ethnic minorities, Roma, or women with HIV/AIDS infection, to name a few. This is no different when they become victims of gender-based violence.

<sup>19</sup> [http://www.europarl.europa.eu/doceo/document/TA-8-2019-0357\\_EN.html](http://www.europarl.europa.eu/doceo/document/TA-8-2019-0357_EN.html)

<sup>20</sup> [http://www.europarl.europa.eu/doceo/document/TA-8-2017-0329\\_EN.html?redirect](http://www.europarl.europa.eu/doceo/document/TA-8-2017-0329_EN.html?redirect)